ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՇԿԱՇԵՆԸ ԵՎ ՆՐԱ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խոշկաշեն (այժմ Ղարաբուլաղ) գյուղը գտնվում է Բուն Աղվանք երկրամասի Կապաղակ (Ղապալոյ) գավառում, Դուրկան գետի (Կուրի ձախ վտակն է) աջ բարձրագիր ափին (այժմ Ադրբեջանական ՍՍՀ-ի Վարդաշենի շրջան)։ Պատմաճարտարապետական հուշարձաններով հարուստ Խոշկաշենը հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է 1434 թ., Խուշփայշեն ձևով։ Այդ թվականին Աղվանից Մաթեոս կաթողիկոսից ոմն Եղիշա Երեցի գնած ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Եես Եղիշայ երէցս գընեցի զաւետարանս ի տէր Մաթէոս կաթողիկոսէն՝ ՌՄ (1200) գեկանայ, վկայութեամբ Եղունգեցի Ովանէս իրիցուն, վկայութեամբ Խուշփայշէն Մանուէլ իրիցուն, վկայութեամբ Սուկութլու զարբուն Դաւզումին, յիշատակ ինձ, և ծնողաց իմոց, և ամենայն արեան մերձաւորաց, հաւրն իմոյ Շատուն, և մաւրն իմոյ Գուլգուլին, եղբաւրն իմ Արթուխշին և Սալղուրշին ի պարոնութեան Ամիրխալիլին և որդոյն իւրոյ Վահրամին։ Թիւն ՊՁԳ. (1434)»[2]։ Հիշատակարանում նշված երեք բնակավայրերն էլ (Եղունգ, Խուշփայշեն և Սուկութլու) գտնվել են Կապաղակ գավառում։ Դրանցից առաջինը, որն աղբյուրներում հայտնի է նաև Եղունգի[3] ձևով, եղել է երկրամասի գլխավոր հոգևոր կենտրոն Ճալեթի սբ. Աստվածածին վանքին խիստ մոտ։ Սուկութլուն, որ հայտնի է իբրև գրչության կենտրոն և Աղվանից Թումա կաթողիկոսի ծննդավայր, գտնվում է Խոշկաշենից 5 կմ արևմուտք։ XIX դ. վերջերին գյուղ է այցելել Մ. Բարխուտարյանցը, և խիստ սահմանափակ տեղեկություններ հաղորդել Խոշկաշենի մասին։ Ըստ Մ. Բարխուտարյանցի, գյուղն անցյալ դարավերջին ուներ 77 տուն հայ բնակչություն (268 արական, 222 իգական) և բաժանված էր երկու թաղամասի։ Թաղամասերից յուրաքանչյուրն ուներ իր եկեղեցին։ Արևմտյան թաղում էր սբ. Եղիշե, իսկ արևելյանում՝ սբ. Աստվածածին եկեղեցին[4]։

Այժմ եկեղեցիներից պահպանվել է միայն արևելյան թաղինը։ Սբ. Եղիշե եկեղեցին, որը գտնվել է արևմտյան թաղում, ներկայումս հիմնահատակ կործանված է։ Սբ. Աստվածածին եկեղեցին ամբողջապես կանգուն է (նկ. 1ա)։ Այն եռանավ բազիլիկ տիպի շենք է (գծ. 1)։ Երկթեք ծածկը պատված է հողով։ Միակ դուռը բացվում է հարավային ճակատից։ Եկեղեցին ամբողջապես կառուցված է անտաշ և կոպտատաշ քարերով. սրբատաշ են միայն շենքի արտաքին և դռան անկյունաքարերը՝ բարավորով հանգերձ։ Սրբատաշ են նաև կոնստրուկտիվ առավել պատասխանատու մասերը՝ սյուները (թվով չորսն են), որմնասյուները և թաղակիր կամարները (նկ. 1բ)։ Եկեղեցու արևելյան կողմում ավագ խորանից հյուսիս և հարավ կան մեկական ուղղանկյուն հատակագծով ավանդատներ։ Եկեղեցուց բացվում են թվով վեց դեպի ներս լայնացող լուսամուտներ, որոնցից 3-ը՝ արևելյան ճակատից, 2-ը՝ հարավային, 1-ը՝ արևմտյան։ Եկեղեցու որմերին պահպանված միակ արձանագրությունը, որ փորագրված է դռան սրբատաշ բարավորի վրա հետևյալն է.

ՇԻՆԷՑԱԻ ԽՈՇԿԱԿԱՇԷՆՈՒ[5] ԳՈՂԻ Ս/ՈՒՐ/Բ ԵԿԵՂԵՑԻՍ
ՀԱՍԱ/ՐԱ/ԿՈՒԹ/ԵԱ/Ն ԱՐԴԵԱՄԲՆ 1887 ԱՄԻ։

---

1 Համանուն գյուղ կա Սյունիքի Երնշակ գավառում։

2 Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 439։

3 Նույն տեղում, էջ 425։

4 Մակար եպիսկոպոս Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, Թիֆլիս 1893, էջ 218։

5 Թե՛ գյուղի գերեզմանոցներում պահպանված տապանագրերում և թե՛ գրականության մեջ Խոշկաշենի նման անվանաձևի չենք հանդիպել։ Ըստ երևույթին արձանագրության մեջ «ԿԱՇ» վանկի կրկնությունը գրչի կողմից թույլ տրված սխալ է։



Նկ. 1.

Խոշկաշենի շրջակա տարածքում պահպանված ամենաարժեքավոր հուշարձանը Եղիշե Առաքյալի վանքն է, որը գտնվում է գյուղից 1 կմ արևելք, Դուրկան գետի աջ կողմում, անտառածածկ ձորալանջին։ XVII դ. այդ կառույցը Կուրի ձախափնյակի հայ ճարտարա-



Գծ. 1

պետության կարևոր նմուշ է։ Այն արժանի տեղ ունի համահայկական ուշ միջնադարյան պաշտամունքային ճարտարապետության մեջ և կարող է լուրջ ուսումնասիրության։ Հուշ-

արձանախումբը բաղկացած է եկեղեցուց, գավթից, միաբանական սենյակներից և գերեզմանոցից։ Վանքի գլխավոր շինությունները՝ եկեղեցին և գավիթը, կառուցված են սրբատաշ դեղնավուն շեշ քարով, կրաշաղախով, իսկ միաբանության սենյակները՝ կոպտատաշ ու անտաշ քարերով (գծ. 2)։ Եկեղեցին հորինվածքով եռանավ բազիլիկ է, որի երկթեք ծածկի տակ առնված թաղը պահում են տաճարի կենտրոնի զույգ սյուները։ Եկեղեցու արևելյան



Նկ. 2.

կողմում ավագ խորանն է, որից հյուսիս և հարավ կան մեկական ավանդատներ։ Վերջիններիս դռները բացվում են արևմտյան ճակատներից սրահի մեջ։ Արևելյան կողմում կիսաշրջան եզրագծով ավագ խորանի տակ կառուցված է մի թաղակապ սենյակ, որն ունի երկու դուռ (հարավից և հյուսիսից)։ Դրանցից յուրաքանչյուրը բացվում է համապատասխան կողմի ավանդատան մեջ։ Ստորգետնյա այս թաղակապ սենյակը (չափերը 2,95×2,85 մ), հավանաբար, ծառայել է իբրև գաղտնարան-պահոց։ Այն կառուցված է անտաշ քարերով ու պատված է սվաղով։ Թաղը կիսաշրջանաձև է։ Եկեղեցին ներսից կառուցված է անտաշ ու կոպտատաշ քարերով, կրաշաղախով։ Բացառություն են կազմում սյունները, որմնասյունները, թաղակիր կամարները ու ավանդատների դռների անկյունաքարերը։ Սրբատաշ քարով է շինված նաև ավագ խորանը, որից արևելք բացվում է դեպի ներս լայնացող մեկ լուսամուտ։ Ավագ խորանից բացվում են նաև երկու խորհրդարաններ։ Եկեղեցին ունի ևս 5 լուսամուտ, որոնցից երկուսը՝ ավանդատներից դեպի արևելք, մյուս երկուսը՝ հարավային ճակատից (մեկը հարավ-արևելյան ավանդատնից, մյուսը սրահից), իսկ վերջինը՝ արևմտյան ճակատից (գավթի ուղղությամբ)։ Թաղակիր երկու սյունները կերտված են զանգվածեղ սրբատաշ քարակտորներից։ Դրանք հիմքում ունեն պարզ կտրվածքով խարիսխներ, իսկ վերևում՝ նույնատիպ խոյակներ։ Եկեղեցին ունի երկու դուռ՝ հարավից և արևմուտքից (նկ. 2բ)։ Նկատվում է, որ գավիթը հետագայում է արևմուտքից կցվել եկեղեցուն, այլապես եկեղեցու արևմտյան դուռը չէր ունենա հանդիսավոր տեսք ու մեծ չափեր։ Եկեղեցու դռներից արևմտյանը ներկայումս խիստ ավերված է։ Բարավորի և անկյունաքարերի վերին մասերը տեղում չեն պահպանվել։ Մնում են միայն վերջիններիս ստորին սրբատաշ քարերը։ Հարավային դուռը, որը բացվում է ճակատի արևմտյան կողմից, պահպանվել է ամբողջությամբ։ Սրա բարավորի արտաքին երեսին փորագրված է երկտող արձանագրություն, որը, ըստ Մ. Բարխուտարյանցի, վերաբերում է եկեղեցու վերանորոգությանը։ Սակայն վիմագրի բովանդակությունը նման ենթադրության հիմք չի տալիս։ Ահա այդ արձանագրությունը.

Ի ՔՐԻՍՏՈՍՍ ՅԻՍՈՒՍ ՅԻՇԵԱԼ ՄԱՂԹԵՄ ԶՎՀԱՍ6

---

6 Վկաս վարդապետն Աղվանից կաթողիկոսության Շամախու թեմի առաջնորդն էր, որի մասին 1671 և 1688 թթ. հիշատակություններ են պահպանվել համապատասխանաբար Սուկուքյու գյուղի եկեղեցում և Մեյսարու սբ. Աստվածածին վանքում։ Հետաքրքրական է, որ չնա-

Վ/Ա/ՐԴ/Ա/Պ/Ե/ՏՍ ՌՃԼԱ (1682 Թ.)[7]։

Եկեղեցու որմերին այլ արձանագրություններ չեն պահպանվել։ Ինչպես նշեցինք, գավիթը, որը կառուցված է համակ սրբատաշ քարերով, եկեղեցուն կից է արևմուտքից։ Այն իր հորինվածքով պատկանում է երկու զույգ փոխհատվող կամարներով իրականացված կենտրոնակազմ գավիթների տիպին[8], որոնց ընդարձակ թռիչքը, առանց միջանկյալ սյուների, պահել է ասրոզշ ծածկը։ Եղիշե Առաքյալի վանքի ներկա օրինակում ուշագրավն այն է, որ կառուցողական միևնույն սկզբունքը կիրառվել է ոչ միայն XII—XIII դդ., այլև ուշ միջնադարում՝ XVII դ.։ Գավիթը ներքուստ ունի մոտավորապես քառակուսի չափեր (6,3×7 մ)[9]։ Նրա հյուսիսային և արևմտյան պատերը արտաքինից հպված են թեք բլրալանջին և այդ հատվածներում սրբատաշ նրեսապատն իրականացված է միայն ներքուստ։ Որմնասյուների վրա հենված որմնակամարները լուծված են սլաքաձև (երկկենտրոն) տարբերակով։ Գավիթը ծառայել է նաև իբրև տապանատուն, որտեղ բազմաթիվ գերեզմանաքարերի մեջ եղել է մի արձանագիր տապանաքար։ Այն Մ. Բարխուտարյանցը ժամանակին ընդօրինակել է։ Ստորև ներկայացնում ենք այդ տապանագիրը.

ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՊԱՇՆՃԱՂՑԻ[10] ՌՃՇԵ (1706)[11]։



Գծ. 2.

Ներկայումս բոլոր տապանաքարերը գավթի փլատակների տակ են։ Վանքի մյուս շինությունները մեկը մյուսին կից միաբանության սենյակներն են, որոնք մի շարքով ձգվում են

յած Շամախու հոգևոր առաջնորդության իրավասությունն ընդգրկող տարածքը հյուսիս-արևմուտքում սահման ուներ Կոկիսոն (Գյոկչայ) գետը, այնուամենայնիվ, այդ թեմի առաջնորդությանն էին պատկանում թե՛ Եղիշե Առաքյալի վանքը և թե դրանից ավելի արևմուտք գտնվող Սուկուպլու գյուղը։

7 Մ. Բարխուտարյանցը բաց է թողել տառավորը՝ Լ-ն, («Աղվանից երկիր և դրացիք», էջ 219)։

8 Նմանատիպ գավիթներ ունեն, օրինակ Նոր Վարագ, Խորակերտ, Դեղձնուտ, Նորավանք, Ուշիի սբ. Սարգիս, Հոռեկ (Գլխո), Բռի եղցի, Բարդուղիմեոսի վանքերը։

9 Հոդվածում ներկայացված հուշարձանների չափագրությունները կատարել են Հ. Ասատրյանը, Մ. Սարգսյանը և տողերիս հեղինակը։

10 Պաշնճաղ գյուղատեղը եկեղեցու և գերեզմանատան ավերակներով հանդերձ գտնվում է Սարաթլու գյուղի մոտակայքում (Շաքիի շրջան)։

11 Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 219։

ավելի քան 20 մ երկարությամբ։ Սենյակների հյուսիսային ծայրը դավթին կից է հարավից։ Միաբանության բոլոր սենյակներն էլ արևմուտքից դավթի նման խրված են թեք բլրալանջի մեջ, իսկ մուտքերը, առանց բացառության, բացվում են արևելյան ճակատներից։ Վանքի գլխավոր կառույցների համեմատ միաբանության շենքերն առավել վատթար վիճակում են։ Դրանց մեծ մասը հիմնովին ավերված է և միայն հատակագծերն են ուրվագծվում։։ Համեմատաբար բարվոք վիճակում է սենյակներից մեկը (պահպանվել է թաղի մի մասը)։ Միաբանության բոլոր սենյակներն էլ կառուցված են եղել անտաշ ու կոպտատաշ քարերով, կրաշաղախով։ Պատերի վրա նկատվում են սվաղի հետքեր։ Սրբատաշ քարեր օգտագործվել են միայն արևելյան ճակատներից բացվող դռների և սենյակների ներսում եղած խորշերի մեջ՝ իբրև անկյունաքարեր։ Միաբանության շենքերից ցած նկատվում են մի ինչ որ շինության ավերակներ՝ ծածկված մացառներով ու լցված հողով։

Վերը նշված կառույցների միշև տարածվում է վանքի գերեզմանոցը, ուր պահպանվել են բազմաթիվ տապանաքարեր։ Միակ արձանագիր գերեզմանաքարը, որ գտնվում է եկեղեցու հարավային պատի տակ, ունի հետևյալ վիմագիրը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԽՈՇԿԱՇԻՆՑԻ
Տ/Է/Ր ՑԱՐՈՒԹՈՒՆԻ, ՈՎ ՀԱՆՏ-
/Ի/ՊԻ ՍՈՑՆ ՏԱՊԱՆԻ ԱՍԱՑԻ
Ա/ՍՏՈՒԱ/Ծ ՈՂՈՐՄԻ 1866 ԱՄԻ։

Ամենայն հավանականությամբ, Եղիշե Առաքյալի վանքը գործել է մինչև թուրք չարդարարների կողմից 1918 թ. Խոշկաշեն գյուղի ողջ ազգաբնակչության ոչնչացումը։ Խոշկաշենը նորից բնակելի է դարձել 1950-ական թվականներին, երբ այդտեղ մշտական բնակություն են հաստատել մի քանի լեզգի ընտանիքներ։

Հայաթափ Խոշկաշենի գերեզմանոցները ենթարկվել են գանձախույզների ավերածություններին, տապանաքարերն օգտագործվում են իբրև շինանյութ։ Ներկայումս Խոշկաշենի երկու գերեզմանոցներում պահպանվել են 21 արձանագիր տապանաքարեր (նկ. 2ա)։ Խոշկաշենում պահպանվել են նաև հայ վարպետների կառուցած երկու աղբյուր, որոնք այժմ էլ գործում են անխափան։

ИСТОРИЧЕСКИЙ ХОШКАШЕН И ЕГО ПАМЯТНИКИ

САМВЕЛ КАРАПЕТЯН

Резюме

Село Хошкашен (ныне с. Карабулах Вардашенского района Азербайджанской ССР) находилось в области Капагак (Кабала), на территории исторического Бун Агванка (левобережная Албания), на правом берегу р. Дуркан (Турианчай, левый приток реки Куры). В древнеармянской литературе упоминание об этом селе сохранилось начиная с 1434 г. В селе сохранились церковь св. Аствацацин (1887 г.), кладбище XIX в., монастырский комплекс Егише Аракел (XVII в.) и др. памятники. Эпиграфические надписи этого сельского кладбища имеют определенное этнографическое и лингвистическое значение.